

ք. Երևան

«___» _____ 2019թ.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «այսուհետ՝ Պատվիրատու», մի կողմից, և «ԴԻՋԻՏԵՆՍ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Արթուր Մարտիրոսյանի, որը գործում է «ԴԻՋԻՏԵՆՍ» ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ցանցային ենթակառուցվածքների տեխնիկական վիճակի գնահատման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պլանակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 10500000 (տաս միլիոն հինգհարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն **համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում** իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **կողմերի միջև վճարումներն իրականացնելու նպատակով կնքվելիք համաձայնագրի** վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

¹⁷ Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձևից բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:²

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՑՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>

<<Երևանի Միսթար Զերացու անվան
պետական բժշկական համալսարան>>

Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, 0025, Կոբյունի 2

Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տեղյան մ/ճ
h/h 11500166513800

ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)

Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>

«ԴԻՋԻՏԵՆՍ»ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան, Սայաթ-Նովա, 112, բն.7

Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ

Հ/Հ 1570034666360100

ՀՎՀՀ 00187323

Տնօրեն՝ Ա. Մարտիրոսյան

(ստորագրությունը)

Կ.Տ

² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	71241200	«Երևանի պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ցանցային ենթակառուցվածքի տեխնիկական գնահատում*	դրամ	5500000	1	Ծառայությունների մատուցումը՝ ք. Երևան, Կոռյունի 2 հասցեյով	Ծառայության մատուցումն իրականացվելու է 2019 թվականին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում:
2	71241200	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի, «Հերացի» թիվ 1 հիվանդանոցի պոլիկլինիկայի և «Մուրացան» հիվանդանոցի ցանցային ենթակառուցվածքների	դրամ	5000000	1	Ծառայությունների մատուցումը՝ ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով	Ծառայության մատուցումն իրականացվելու է 2019 թվականին՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ

		նախագծում**					մտնելու օրվանից սկսած 30 օրացուցային օրվա ընթացքում:
--	--	-------------	--	--	--	--	--

***«Երևանի պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ցանցային ենթակառուցվածքի տեխնիկական գնահատում:**

Ցանցային ենթակառուցվածքի տեխնիկական գնահատումն իր մեջ ներառում է՝

1. Ընթացիկ ցանցային ենթակառուցվածքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն.
 - 1.1. մալուխային համակարգի ֆիզիկական տոպոլոգիայի հետազոտություն,
 - 1.2. ցանցային սարքերի տեղակայման և դրանց կարգավորումների հետազոտություն,
 - 1.3. մալուխային համակարգի և ցանցային սարքերի ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաների գծագրում:
 - 1.4. ընթացիկ ցանցային ենթակառուցվածքի ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաների դիզայնի թերությունների ու առկա խափանման կետերի նույնականացում,
 - 1.5. ընթացիկ ցանցային ենթակառուցվածքի ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաների օպտիմիզացիա՝ դիզայնի թերությունների վերացման ու խափանման կետերի նվազեցման միջոցով,
 - 1.6. ցանցային ենթակառուցվածքի արդյունավետ ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաների նախագծում,
 - 1.7. ընթացիկ և նոր ցանցային տոպոլոգիաների ընդհանուր ցանցային սարքերի նույնականացում,
 - 1.8. ցանցային տոպոլոգիաների օպտիմիզացիայի համար պահանջվող ցանցային սարքերի նույնականացում:

Ցանցային ենթակառուցվածքի հանդեպ տեխնիկական պահանջներն են՝

2. Համակարգչային ցանց.
 - 2.1. համակարգչային ցանցը պետք է կառուցվի հիմնական, բաշխիչ և մուտքային մակարդակներով,
 - 2.2. ցանկացած շինությունում կապակցման հանգույցը պետք է բաժանվի երկու մասի՝ հիմնական և բաշխիչ,
 - 2.3. հիմնական կապակցման հանգույցը պետք է փոխկապակցվի բաշխիչ հանգույցների հետ, որոնք հանդիսանում են յուրաքանչյուր հարկի բաշխման կետերը,
 - 2.4. հիմնական մակարդակի ցանցը պետք է բաղկացած լինի երթուղիչից և կոմուտատորից,
 - 2.5. հիմնական երթուղիչը պետք է միանա հիմնական կոմուտատորին 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ,
 - 2.6. հիմնական երթուղիչը պետք է ունենա IPSec և դինամիկ երթուղման հնարավորություն,
 - 2.7. հիմնական կոմուտատորը պետք է ապահովի 10 գիգաբիթ/վարկյան օպտիկամանրաթելային հնարավորությամբ աշխատանք և հագեցած լինի օպտիկամանրաթելային SPF+ մոդուլներով,
 - 2.8. հիմնական կոմուտատորը պետք է միանա կամպուսի շինությունների հիմնական կապուղիների օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ,
 - 2.9. հիմնական մակարդակի ցանցի հետ կապուղին պետք է ունենա օպտիկամանրաթելային և ապահովի 10 գիգաբիթ/վարկյան արագություն,
 - 2.10. մուտքային մակարդակի կոմուտատորները պետք է միանան բաշխիչ կոմուտատորներին 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ, իսկ օգտագործողներին՝ 1 գիգաբիթ/վարկյան արագությամբ,
 - 2.11. յուրաքանչյուր մուտքային մակարդակի կոմուտատոր պետք է միանա նույն հարկում տեղակայված մեկ բաշխիչ մակարդակի կոմուտատորին,

- 2.12. հիմնական մակարդակի ցանցից դեպի բաշխիչ մակարդակի ցանց միացումները պետք է լինեն օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ,
- 2.13. նույն հարևան տեղակայված կետերը, որոնց միջև հեռավորությունը գերազանցում է 90 մետրը, պետք է նույնպես միանան օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ, հետևաբար պետք է դիտարկել բաշխիչ կոմուտատորում համապատասխան հանգույցների առկայությունը,
- 2.14. օգտագործողները պետք է միանան մուտքային մակարդակի ցանցին առնվազն «Ethernet Cat5e» տեսակի մալուխով,
- 2.15. օգտագործողները կարող են միանալ նաև բաշխիչ կոմուտատորին, եթե նրանում նախատեսված են «Ethernet» հանգույցներ,
- 2.16. բոլոր մալուխները պետք է անցնեն մալուխատարերով և լինեն պատշաճ կերպով համարակալված՝ նույնականացումն ապահովելու համար:
- 2.17. օգտագործողների տեղակայման և միացման կետերի ուսումնասիրությունը, ինչպես նաև հնարավոր աճի և (կամ) տեղաբաշխման հնարավորության նախատեսումը պարտադիր է,
- 2.18. ցանցային սարքերը պետք է համապատասխանեն նկարագրված պահանջներին, հետևաբար, համապատասխան սարքերի ընտրության ուսումնասիրությունը պարտադիր է:

3. Համակարգչային անլար ցանց.

- 3.1. համակարգչային անլար ցանցը նույնպես պետք է կառուցվի հիմնական, բաշխիչ և մուտքային մակարդակներով,
- 3.2. հիմնական կոմուտատորը պետք է ապահովի 1 գիգաբիթ/վարկյան արագության միացում բաշխիչ կոմուտատորների հետ, որոնք էլ իրենց հերթին՝ 1 գիգաբիթ/վարկյան արագություն մուտքային մակարդակի կոմուտատորների հետ,
- 3.3. բաշխիչ մակարդակի կոմուտատորները պետք է ունենան հոսանքը մալուխի միջոցով փոխանցելու հնարավորություն (PoE), իսկ հիմնական մակարդակի հետ կապուղին պետք է լինի օպտիկամանրաթելային,
- 3.4. անհրաժեշտ է իրականացնել ռադիո հետազոտություն առավելագույն օգտագործելի տիրույթները պարզելու և օպտիմալ քանակի անլար մուտքային կետեր օգտագործելու նպատակով,
- 3.5. հաճախականության ինտերֆերենսը բացառելու կամ նվազեցնելու նպատակով հաճախականության դիագնոստիկ հետազոտությունը նույնպես պարտադիր է:
- 3.6. կամպուսի յուրաքանչյուր շինության անլար ցանցը պետք է միացվի հիմնական շենքի անլար ցանցի հետ օպտիկամանրաթելային կապուղով,
- 3.7. պետք է նախատեսվի անլար ցանցի ռոումինգը կամպուսի մի շինությունից դեպի մյուսը,
- 3.8. ցանցային սարքերը պետք է համապատասխանեն նկարագրված պահանջներին, հետևաբար, համապատասխան սարքերի ընտրության ուսումնասիրությունը պարտադիր է:

4. Անվտանգության կարգավորումներ.

- 4.1. համակարգչային ցանցի սեգմենտավորում VLAN տեխնոլոգիայի միջոցով, ներառյալ անլար ցանցերը, պարտադիր է,
- 4.2. VLAN-ների բաժանումը, ինչպես նաև նրանց երթուղումը, պետք է իրականացվի հիմնական կոմուտատորներում,
- 4.3. մուտքային մակարդակի կոմուտատորներում «port security» տեխնոլոգիայի կիրառումը պարտադիր է,
- 4.4. միջցանցային հոսքերը պետք է պաշտպանված լինեն ֆայերվոլների միջոցով,
- 4.5. անլար ցանցի անվտանգությունը պետք է նախատեսվի «RADIUS» համակարգի միջոցով՝ կիրառելով արդի ծածկագրման ալգորիթմներ,
- 4.6. հեռահար կապը պետք է կազմակերպված լինի «IPSec VPN» տեխնոլոգիայի միջոցով՝ կիրառելով արդի ծածկագրման ալգորիթմներ:

*****«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի, «Հերացի» թիվ հիվանդանոցի պոլիկլինիկայի և «Մուրացան» հիվանդանոցի ցանցային ենթակառուցվածքների նախագծում:***

Ցանցային ենթակառուցվածքների նախագծումն իր մեջ ներառում է՝

1. Շինությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն.
 - 1.1. կառուցվածքային ստորաբաժանումների տեղակայման ուսումնասիրություն,
 - 1.2. սերվերային սենյակի տեղակայման նույնականացում,
 - 1.3. ցանցային սարքերի տեղակայման նույնականացում,
 - 1.4. մալուխային համակարգի նախագծում,
 - 1.5. ցանցային ենթակառուցվածքի արդյունավետ ֆիզիկական և տրամաբանական տոպոլոգիաների նախագծում:

Ցանցային ենթակառուցվածքների հանդեպ տեխնիկական պահանջներն են՝

2. Համակարգչային ցանց.
 - 2.1. համակարգչային ցանցը պետք է կառուցվի հիմնական, բաշխիչ և մուտքային մակարդակներով,
 - 2.2. ցանկացած շինությունում կապակցման հանգույցը պետք է բաժանվի երկու մասի՝ հիմնական և բաշխիչ,
 - 2.3. հիմնական կապակցման հանգույցը պետք է փոխկապակցվի բաշխիչ հանգույցների հետ, որոնք հանդիսանում են յուրաքանչյուր հարկի բաշխման կետերը,
 - 2.4. հիմնական մակարդակի ցանցը պետք է բաղկացած լինի երթուղիչից և կոմուտատորից,
 - 2.5. հիմնական երթուղիչը պետք է միանա հիմնական կոմուտատորին 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ,
 - 2.6. հիմնական երթուղիչը պետք է ունենա IPSec և դինամիկ երթուղման հնարավորություն,
 - 2.7. հիմնական կոմուտատորը պետք է ապահովի 10 գիգաբիթ/վարկյան օպտիկամանրաթելային հնարավորությամբ աշխատանք և հազեցած լինի օպտիկամանրաթելային SPF+ մոդուլներով,
 - 2.8. հիմնական կոմուտատորը պետք է միանա կամպուսի շինությունների հիմնական կապուղիներին օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ,
 - 2.9. հիմնական մակարդակի ցանցի հետ կապուղին պետք է ունենա օպտիկամանրաթելային և ապահովի 10 գիգաբիթ/վարկյան արագություն,
 - 2.10. մուտքային մակարդակի կոմուտատորները պետք է միանան բաշխիչ կոմուտատորներին 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ, իսկ օգտագործողներին՝ 1 գիգաբիթ/վարկյան արագությամբ,
 - 2.11. յուրաքանչյուր մուտքային մակարդակի կոմուտատոր պետք է միանա նույն հարկում տեղակայված մեկ բաշխիչ մակարդակի կոմուտատորին,
 - 2.12. հիմնական մակարդակի ցանցից դեպի բաշխիչ մակարդակի ցանց միացումները պետք է լինեն օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ,
 - 2.13. նույն հարկում տեղակայված կետերը, որոնց միջև հեռավորությունը գերազանցում է 90 մետրը, պետք է նույնպես միանան օպտիկամանրաթելային կապուղով՝ 10 գիգաբիթ/վարկյան արագությամբ, հետևաբար պետք է դիտարկել բաշխիչ կոմուտատորում համապատասխան հանգույցների առկայությունը,
 - 2.14. օգտագործողները պետք է միանան մուտքային մակարդակի ցանցին առնվազն «Ethernet Cat5e» տեսակի մալուխով,
 - 2.15. օգտագործողները կարող են միանալ նաև բաշխիչ կոմուտատորին, եթե նրանում նախատեսված են «Ethernet» հանգույցներ,
 - 2.16. բոլոր մալուխները պետք է անցնեն մալուխատարերով և լինեն պատշաճ կերպով համարակալված՝ նույնականացումն ապահովելու համար:
 - 2.17. օգտագործողների տեղակայման և միացման կետերի ուսումնասիրությունը, ինչպես նաև հնարավոր աճի և (կամ) տեղաբաշխման հնարավորության նախատեսումը պարտադիր է,
 - 2.18. ցանցային սարքերը պետք է համապատասխանեն նկարագրված պահանջներին, հետևաբար, համապատասխան սարքերի ընտրության ուսումնասիրությունը պարտադիր է:
3. Համակարգչային անլար ցանց.

- 3.1. համակարգչային անլար ցանցը նույնպես պետք է կառուցվի հիմնական, բաշխիչ և մուտքային մակարդակներով,
- 3.2. հիմնական կոմուտատորը պետք է ապահովի 1 գիգաբիթ/վարկյան արագության միացում բաշխիչ կոմուտատորների հետ, որոնք էլ իրենց հերթին՝ 1 գիգաբիթ/վարկյան արագություն մուտքային մակարդակի կոմուտատորների հետ,
- 3.3. բաշխիչ մակարդակի կոմուտատորները պետք է ունենան հոսանքը մալուխի միջոցով փոխանցելու հնարավորություն (PoE), իսկ հիմնական մակարդակի հետ կապուղին պետք է լինի օպտիկամանրաթելային,
- 3.4. անհրաժեշտ է իրականացնել ռադիո հետազոտություն առավելագույն օգտագործելի տիրույթները պարզելու և օպտիմալ քանակի անլար մուտքային կետեր օգտագործելու նպատակով,
- 3.5. հաճախականության ինտերֆերենսը բացառելու կամ նվազեցնելու նպատակով հաճախականության դիագնոստիկ հետազոտությունը նույնպես պարտադիր է:
- 3.6. կամպուսի յուրաքանչյուր շինության անլար ցանցը պետք է միացվի հիմնական շենքի անլար ցանցի հետ օպտիկամանրաթելային կապուղով,
- 3.7. պետք է նախատեսվի անլար ցանցի ռոումինգը կամպուսի մի շինությունից դեպի մյուսը,
- 3.8. ցանցային սարքերը պետք է համապատասխանեն նկարագրված պահանջներին, հետևաբար, համապատասխան սարքերի ընտրության ուսումնասիրությունը պարտադիր է:

4. Անվտանգության կարգավորումներ.

- 4.1. համակարգչային ցանցի սեզմենտավորում VLAN տեխնոլոգիայի միջոցով, ներառյալ անլար ցանցերը, պարտադիր է,
- 4.2. VLAN-ների բաժանումը, ինչպես նաև նրանց երթուղումը, պետք է իրականացվի հիմնական կոմուտատորներում,
- 4.3. մուտքային մակարդակի կոմուտատորներում «port security» տեխնոլոգիայի կիրառումը պարտադիր է,
- 4.4. միջցանցային հոսքերը պետք է պաշտպանված լինեն ֆայերվոլների միջոցով,
- 4.5. անլար ցանցի անվտանգությունը պետք է նախատեսվի «RADIUS» համակարգի միջոցով՝ կիրառելով արդի ծածկագրման ալգորիթմներ,
- 4.6. հեռահար կապը պետք է կազմակերպված լինի «IPSec VPN» տեխնոլոգիայի միջոցով՝ կիրառելով արդի ծածկագրման ալգորիթմներ:

<<ԳՆՈՐԴ>>
**<<Երևանի Միախար Հերացու անվան
 պետական բժշկական համալսարան>>
 Հիմնադրամ
 Հասցե՝ ք. Երևան, 0025, Կոբյունի 2
 Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
 h/h 11500166513800
 ՀՎՀՀ 01503448
 Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան**

<<ՎԱՃԱՌՈՂ>>
**«ԴԻՋԻՏԵԼՍ»ՍՊԸ
 Հասցե՝ ք.Երևան, Մայրթ-Նովա, 112, բն.7
 Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
 Հ/Հ 1570034666360100
 ՀՎՀՀ 00187323
 Տնօրեն՝ Ա. Մարտիրոսյան**

(ստորագրությունը)
 Կ.Տ

(ստորագրությունը)
 Կ.Տ

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « »
« » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը
հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական և բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի /
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

